ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ իր. գ. թ., դասախոս Գանջումյան Ե. Է.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քաղաքացիական իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն» (հեռակա)

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Քաղաքացիական իրավունք (ընդհանուր մաս)» ուսումնական առարկան նվիրված է քաղաքացիական իրավունքի ոլորտում տեսական և գործնական հիմնախնդիրների ուսումնասիրությանը, այդ թվում՝ հիմնարար դոկտրինալ մեկնաբանությունների, հիմնարար քաղաքացիական իրավունքի ինստիտուտների, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի ոլորտում իրավակիրառ հարցերի ուսումնասիրությանը։ Առարկայի ուսումնասիրության ընթացքում ուսանողները ծանոթանում են քաղաքացիական հարաբերությունները կարգավորող ներպետական օրենսդրությանը, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի ոլորտում առկա արդի հիմնահարցերին։

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի **նպատակն** է ուսանողին ծանոթացնել քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման առանձնահատկություններին, ի մասնավորի՝ քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկային ու մեթոդներին, սուբյեկտների և օբյեկտների կարգավիճակին, գործարքների էությանը, իրավունքների պաշտպանության եղանակներին, կարգին և այլն՝ տրամադրելով բազմակողմանի իրավական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ քաղաքացիաիրավական ոլորտում, ըստ այդմ՝ հետագայում ապահովելով շրջանավարտների մրցունակությունը աշխատաշուկայում։

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ **խնդիրները**. ներկայացնել

- ✓ քաղաքացիական իրավունքի՝ որպես իրավունքի ճյուղի, գիտության, ուսումնական առարկայի հասկացությունը, էությունը և բովանդակությունը,
- ✓ իրավունքի համակարգում քաղաքացիական իրավունքի դերը և նշանակությունը,

- ✓ քաղաքացիական իրավահարաբերության հասկացությունը, բովանդակությունը, տեսակները, տարրերը, առաջացման, փոփոխության և դադարեցման հիմքերը,
- ✓ քաղաքացիական իրավունքի սուբյեկտների բնութագիրը և տեսակները,
- ✓ քաղաքացիական իրավունքի օբյեկտների բնութագիրը և տեսակները,
- ✓ գործարքների հասկացության, դրանց տեսակներն ու ձևը, վավերության պայմանները,
- ✓ գործարքի անվավերության հասկացությունը, անվավեր գործարքի տեսակներն ու հետևանքները,
- ✓ ներկայացուցչության հասկացությունը, հիմքերը և տեսակները,
- ✓ լիազորագրի հասկացությունը, տեսակները և ձևը,
- ✓ ժամկետների հասկացության և տեսակները, հայցային վաղեմությունը,
- ✓ սեփականության իրավունքի հասկացությունը, էությունը և բովանդակությունը,
- ✓ ընդհանուր սեփականության իրավունքի հասկացությունը և տեսակները,
- ✓ սահմանափակ իրային իրավունքների հասկացությունը և տեսակները,
- ✓ սեփականության իրավունքի պաշտպանությունը,
- ✓ պարտավորությունների հասկացությունը և տեսակները,
- ✓ պարտավորությունների կատարման և կատարման ապահովման ձևերը,
- ✓ պարտավորությունների դադարման հասկացությունը և տեսակները,
- ✓ քաղաքացիաիրավական պայմանագրի հասկացությունը, տարրերը, բովանդակությունը, ձևը, կնքման կարգը և տեսակները,

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը. Գույքային ինքնուրույնություն ունեցող իրավահավասար սուբյեկտների կամահայտնությամբ առաջացող ապրանքադրամական բնույթի գույքային հարաբերությունները՝ գույքային հարաբերությունների հետ կապված, իսկ օրենքով

նախատեսված դեպքերում նաև գույքային հարաբերությունների հետ չկապված անձնական ոչ գույքային հարաբերությունները:

Դասընթացի առարկան. Քաղաքացիական իրավունքի գիտության ուսումնասիրությունների արդյունքների, մշակած տեսական դրույթների, կատեգորիաների, հիմնավորումների հիմքով քաղաքացիական իրավունքի էության, առանձնահատկությունների, քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման կառուցակարգերի, քաղաքացիական իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտերի դերի ու նշանակության պարզաբանում, ինչպես նաև քաղաքացիաիրավական ոլորտի իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության ուսումնասիրություն:

Դասընթացի մուտքային պահանջները.

Հայերենի գերազանց իմացություն, գրավոր և բանավոր հաղորդակցման հմտություններ: Ցանկալի է, որպեսզի ուսանողները, սկսելով դասընթացի ուսումնասիրությունը, ունենան պետության և իրավունքի հիմունքների վերաբերյալ բազային գիտելիքներ և հմտություններ:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները պետք է.

իմանան՝

- քաղաքացիական իրավունքի հասկացությունը,
- քաղաքացիական իրավունքի աղբյուրները, դրանց առանձնահատկությունները իրավունքի այլ ճյուղերի աղբյուրների համեմատ,
- քաղաքացիական իրավահարաբերությունները, դրանց տեսակները, բովանդակությունը, առաջացման, փոփոխության և դադարեցման հիմքերը;

- քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների կազմը. իրավասուբյեկտության հասկացությունը,
- քաղաքացիական իրավունքի օբյեկտների, դրանց տեսակների բնութագրերը;
- ՀՀ քաղաքացիական իրավունքի առանցքային ինստիտուտների էությունը:

կարողանան՝

- պատկերացում ունենալ ՀՀ քաղաքացիական իրավունքով կարգավորվող հարաբերությունների բնույթի վերաբերյալ,
- ինքնուրույն գնահատել ՀՀ քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների իրավական կարգավիճակը,
- ընկալել ՀՀ քաղաքացիական իրավունքի կարգավորման նշանակությունը:

ունակ լինեն՝

- ինքնուրույն կիրառել քաղաքացիաիրավական օրենսդրությունը,
- իրավաբանական ճիշտ գնահատական տալ փաստական հանգամանքներին:

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

Քաղաքացիական հարաբերությունների կարգավորմանը վերաբերող արդիական, տեսական խորացված գիտելիքներ, ոլորտում առկա նորագույն տեսությունների, հայեցակարգերի իմացություն: Ի մասնավորի՝ համապարփակ գիտելիքներ քաղաքացիական իրավունքի, դրա կարգավորման առարկայի ու մեթոդների, սուբյեկտների, օբյեկտների, գործարքների, ներկայացուցչության և ժամկետների ինստիտուտների, սեփականության և սահմանափակ իրավունքների, սուբյեկտների սեփականության իրավունքի բովանդակության, սեփականության և սահմանափակ իրային իրավունքների պաշտպանության, պարտավորությունների,

քաղաքացիաիրավական պայմանագրի հասկացության, դրա տարրերի, բովանդակության և ձևի, կնքման կարգի, պայմանագրերի տեսակների վերաբերյալ:

Գիտելիքները՝

1. Իրավունքի ընկալման հիմնական հայեցակարգերի, իրավաստեղծման, իրավաբանական տեխնիկայի և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք: Քաղաքացիական հարաբերությունների կարգավորմանը վերաբերող արդիական, տեսական խորացված գիտելիքներ, ոլորտում առկա նորագույն տեսությունների, հայեցակարգերի իմացություն: Ի մասնավորի.
   - քաղաքացիական իրավունքի հասկացությունը, քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկան ու մեթոդները, սկզբունքները, աղբյուրները և նորմերը, գործառույթները և համակարգը,
   - քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, օբյեկտները,
   - գործարքները, ներկայացուցչությունը, ժամկետները,
   - սեփականության իրավունքն ու այլ իրային իրավունքները, պարտավորական իրավունքը, քաղաքացիաիրավական պայմանագրի հասկացությունը, տարրերը, բովանդակությումը և ձևը, կնքման կարգը և տեսակները,
   - ժառանգման իրավունքի հասկացության, ժառանգման տեսակների, ժառանգման իրավունքի իրականացման մասին վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք:
2. Իրավակիրառման (մասնավորապես՝ իրավաբանական փաստերի վերլուծության, իրավաբանական որակման, իրավական նորմերի և պայմանագրերի մեկնաբանման), իրավական կոլիզիաները լուծելու կանոնների և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք:

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

1. Կարող է ինքնուրույն իրավական գնահատական տալ ՀՀ քաղաքացիական իրավահարաբերությունների էությանը։
2. Կարող է կիրառել քաղաքացիաիրավական ոլորտի նորմատիվ իրավական ակտերը։
3. Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքներն առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար։

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Կարող է ընկալել ՀՀ քաղաքացիական իրավունքի կարգավորման նշանակությունը։
2. Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ պարզաբանել իրավական նորմերը և պայմանագրերը՝ պատկերացում ունենալով ՀՀ քաղաքացիական իրավունքով կարգավորվող հարաբերությունների բնույթի վերաբերյալ։
3. Կարող է արագ կողմնորոշվել իրավական խնդիրներ լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը, այդ թվում՝ առաջ քաշելով հակափաստարկներ՝ ձևավորելով նորարարական մտածողություն և նորարարական գործունեություն ծավալելու կարողունակություն։
4. Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում։

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը***

1. Ունակ է ինքնուրույն կիրառել քաղաքացիաիրավական օրենսդրությունը։
2. Ունակ է իրավաբանական ճիշտ գնահատական տալ փաստական հանգամանքներին քաղաքացիաիրավական ոլորտում։
3. Ունակ է ցիվիլիստիկայի ոլորտում տալ որակյալ իրավական խորհրդատվություն և եզրակացություններ։

4. Ունակ է պարբերաբար ուսումնասիրելու օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, մասնագիտական գրականությունը և ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Դասավանդման եղանակները և մեթոդները: Սույն առարկայի շրջանակներում կիրառվում են հետևյալ ժամանակակից դասավանդման եղանակները և մեթոդները՝ տեսական նյութի բացատրություն, գործնական աշխատանքներ, բանավոր քննարկումներ, անհատական աշխատանքներ, քեյս-ստադի, դատախաղ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ **8 ակադեմիական կրեդիտ (288 ակադեմիական ժամ)** աշխատատարությամբ, որից **40 ակադեմիական ժամ** նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել **2-րդ ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակներում**:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	288
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	40
1.1.1. Դասախոսություններ	16
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	24
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	235
1.2.1. Քննություններին նախապատրաստում	100

1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	135
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	70
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	65
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք գնահատակ անով (1կիսամ.) քննություն (2կիսամյակ)**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Քաղաքացիական իրավունքը որպես իրավունքի ճյուղ	**2**	**1**	**1**
Թեմա 2. Քաղաքացիական իրավահարաբերություններ	**3**	**2**	**1**
Թեմա 3. Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագումը, իրականացումը և պաշտպանությունը	**3**	**1**	**2**
Թեմա 4. Ֆիզիկական անձինք որպես	**3**	**1**	**2**

քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ			
Թեմա 5 Իրավաբանական անձինք որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ	**3**	**1**	**2**
Թեմա 6 Հայաստանի Հանրապետությունն ու վարչատարածքային միավորումները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ	**4**	**2**	**2**
Թեմա 7 Քաղաքացիական իրավունքի օբյեկտները	**2**	**1**	**1**
Թեմա 8 Գործարքներ	**3**	**2**	**1**
Թեմա 9 Ներկայացուցչություն	**2**	**1**	**1**
Թեմա 10 Ժամկետները քաղաքացիական իրավունքում, հայցային վաղեմություն	**2**	**1**	**1**
Թեմա 11 Սեփականության իրավունք և այլ իրային իրավունքներ	**3**	**1**	**2**
Թեմա 12 Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին	**3**	**1**	**2**
Թեմա 13 Քաղաքացիաիրավական պայմանագիր	**4**	**2**	**2**
Թեմա 14 Ժառանգական իրավունք Քաղաքացիաիրավական պատասխանատվությունը	**3**	**1**	**2**
Ընդամենը	**40**	**16**	**24**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Քաղաքացիական իրավունքը որպես իրավունքի ճյուղ

1. Քաղաքացիական իրավունքի հասկացությունը:
2. Քաղաքացիական իրավունքի սկզբունքների հասկացությունը, նշանակությունը և դասակարգումը:
3. Քաղաքացիական օրենսդրության և այլ իրավական ակտերի գործողությունը ժամանակի մեջ և տարածության վրա: Իրավունքի և օրենքի անալոգիան քաղաքացիական իրավունքում:

Թեմա 2. Քաղաքացիական իրավահարաբերություններ

1. Քաղաքացիական իրավահարաբերության հասկացությունը և տարրերը:
2. Քաղաքացիական իրավահարաբերության բովանդակությունը:
3. Քաղաքացիական իրավահարաբերության դասակարգում:

Թեմա 3. Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագումը, իրականացումը և պաշտպանությունը

1. Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը:
2. Քաղաքացիական իրավուքների իրականացումը և պարտականությունների կատարումը:
3. Քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձևերը և եղանակները:

Թեմա 4. Ֆիզիկական անձինք որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ

1. Քաղաքացիական իրավունակության հասկացությունը: Իրավունակության և սուբյեկտիվ իրավունքի հարաբերակցությունը:

2. Լրիվ գործունակության հասկացությունը և ծագման հիմքերը: Էմանսիպացիայի հասկացությունը, հիմքերը, կարգն ու նշանակությունը:
3. Մինչև 14 տարեկան և 14-18 տարեկան անչափահասների գործունակությունը:
4. Քաղաքացու գործունակության սահմանափակման հասկացությունը, հիմքերը, կարգն ու հետևանքները:
5. Քաղաքացուն անգործունակ ճանաչելու հիմքերը, կարգն ու հետևանքները:
6. Խնամակալության և հոգաբարձության հասկացությունը և նշանակման հիմքերը:
7. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու նշանակությունը, կարգը, պայմանները և հետևանքները: Քաղաքացուն մահացած հայտարարելու նշանակությունը, կարգը, պայմանները և հետևանքները:

Թեմա 5 Իրավաբանական անձինք որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ

1. Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները:
2. Իրավաբանական անձի ստեղծման կարգը:
3. Իրավաբանական անձի վերակազմակերպման տեսակները և դրանց ընդհանուր բնութագիրը:
4. Իրավաբանական անձի լուծարման հասկացությունը և հիմքերը:
5. Առևտրային իրավաբանական անձանց հասկացությունը և իրավական կարգավիճակը:
6. Ոչ առևտրային իրավաբանական անձանց հասկացությունը և իրավական կարգավիճակը:
7. Տնտեսական ընկերությունների և ընկերակցություններ հասկացությունը և առանձնահատկությունները:
8. Լիակատար և վստահության վրա հիմնված ընկերակցությունների էությունը:
9. Սահմանափակ և լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների հասկացությունն ու առանձնահատկությունները:
10. Բաժնետիրական ընկերության հասկացությունը, առանձնահատկությունները և տեսակները:

11. Կախյալ և դուստր ընկերությունների հասկացությունը և կարգավիճակը: Իրավաբանական անձանց հիմնարկները, մասնաճյուղերը և ներկայացուցչությունները:

12. Հասարակական միավորումները և հիմնադրամները որպես իրավաբանական անձինք:

Թեմա 6 Հայաստանի Հանրապետությունն ու վարչատարածքային միավորումները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ

1. Հայաստանի Հանրապետության, մարզերի և համայնքների իրավասուբյեկտության առանձնահատկությունները

2. Պետության մասնակցության ձևերը քաղաքացիական իրավահարաբերություններում

Թեմա 7 Քաղաքացիական իրավունքի օբյեկտները

1. Քաղաքացիական իրավունքի օբյեկտների հասկացությունը և տեսակները ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության:

2. Իրերի հասկացությունը, դասակարգումը և դրա իրավական նշանակությունը:

3. Դրամական միջոցները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ: Արժութային արժեքների քաղաքացիական ռեժիմի առանձնահատկությունները:

4. Արժեթղթերի հասկացությունը, տեսակները ու դրանց ընդհանուր բնութագիրը:

5. Անձնական ոչ գույքային բարիքները, աշխատանքները և ծառայությունները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ:

Թեմա 8 Գործարքներ

1. Գործարքների հասկացությունը, հատկանիշներն ու նշանակությունը: Գործարքների տեսակները:

2. Գործարքի ձևը: Բանավոր ձևով կնքվող գործարքներ: Գրավոր ձևով կնքվող գործարքները և ձևը չպահպանելու հետևանքները: Գործարքից բխող իրավունքների պետական գրանցման նշանակությունը:

3. Գործարքի վավերության պայմանները:

4. Գործարքի անվավերության հասկացությունը: Անվավեր գործարքի տեսակներն ու հետևանքները:

Թեմա 9 Ներկայացուցչություն

1. Ներկայացուցչության հասկացությունը, հիմքերը և տեսակները:
2. Լիազորագրի հասկացությունը, տեսակները և ձևը:

Թեմա 10 Ժամկետները քաղաքացիական իրավունքում, հայցային վաղեմություն

1. Ժամկետների հասկացությունը և նշանակությունը քաղաքացիական իրավունքում: Ժամկետների դասակարգումը:

2. Հայցային վաղեմության ժամկետների հասկացությունը և նշանակությունը:

Թեմա 11 Սեփականության իրավունք և այլ իրային իրավունքներ

1. Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը:

2. Սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերը:

3. Սեփականության իրավունքի դադարելը սեփականատիրոջ կամքով:

4.Սեփականության իրավունքի դադարելը սեփականատիրոջ կամքին հակառակ կամ նրա կամքից անկախ:

5. Ընդհանուր սեփականության իրավունքի հասկացությունը և առաջացման հիմքերը:

6. Ընդհանուր բաժնային սեփականության իրավունք:

7. Ընդհանուր համատեղ սեփականության իրավունք:

8. Վինդիկացիոն և ներգատոր հայցեր: Գույքն ուրիշի ապօրինի տիրապետությունից վերադարձնելու ժամանակ կատարվող հաշվարկները:

9. Սահմանափակ իրային իրավունքները:

10. Սերվիտուտը որպես սահմանափակ իրային իրավունք:

11. Հողամասի կառուցապատման իրավունք:

12. Հարևանային իրավունք:

Թեմա 12 Ընդհանուր դրույթներ պարտավորությունների մասին

1. Քաղաքացիաիրավական պարտավորության հասկացությունը, տեսակները (դասակարգումը) և ծագման հիմքերը:

2. Անձանց բազմաթիվությունը պարտավորության մեջ:

3. Բաժնային և համապարտ պարտավորությունների ընդհանուր բնութագիրը:

4. Պահանջի զիջումը և պարտքի փոխանցումը պարտավորությունում:

5. Տուժանքը որպես պարտավորության ապահովման միջոց: Տուժանքի տեսակները:

6. Գրավը և ապահովված իրավունքը որպես պարտավորության ապահովման միջոց: Գրավի տեսակները: Գրավի ծագման հիմքերը: Գրավի պայմանագիրը և դրա ձևը: Գրավադրված գույքի իրացման կարգը:

7. Երաշխավորությունը որպես պարտավորության ապահովման միջոց:

8. Երաշխիքը որպես պարտավորության ապահովման միջոց:

9. Պահումը և կանխավճարը որպես պարտավորության ապահովման միջոց:

10. Պարտավորությունների կատարման հասկացությունը և սկզբունքները:

11. Պարտավորության դադարման հիմքերը:

Թեմա 13 Քաղաքացիաիրավական պայմանագիր

1. Քաղաքացիաիրավական պայմանագրի հասկացությունը և դասակարգումը

2. Քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու կարգը: Պայմանագրի կնքումը սակարկություններով:

3. Պայմանագրի փոփոխման և լուծման հիմքերը, կարգը և հետևանքները:

Թեմա 14 Ժառանգական իրավունք

1. Ժառանգման հասկացությունը և նշանակությունը: Ժառանգության բացման ժամանակը և ժառանգության բացման վայրը: Ժառանգության զանգվածը: Գույքի առանձին տեսակների ժառանգման առանձնահատկությունները:

2. Կտակի հասկացությունը, ձևը, բովանդակությունը և տեսակները:

3. Ժառանգումն ըստ օրենքի: Ըստ օրենքի ժառանգների շրջանակը: Ժառանգումը ներկայացման իրավունքով: Անարժան ժառանգներ:

4. Ժառանգությունն ընդունելու կարգն ու եղանակները: Ժառանգությունից հրաժարվելը և դրա հետևանքները:

5. Ժառանգական գույքի բաժանումը, պահպանման և կառավարման կարգն ու միջոցները:

Թեմա 15 Քաղաքացիաիրավական պատասխանատվությունը

1. Քաղաքացիաիրավական պատասխանատվության հասկացությունը:

2. Քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակները և նշանակությունը:

3. Պատասխանատվության պայմանները (հիմքերը):

4. Պատասխանատվության չափը:

5. Պատասխանատվությունից ազատելու պայմանները:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

Բարսեղյան Տ.Կ. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք» Երևան, հատոր 1

Ավետիսյան Վ.Դ. «Բաժնետիրական իրավունք» Մենագրություն ԵՊՀ հրատ., 2005թ.

Гражданское право. Под ред. Алексеева С.С. 3-е изд., перераб. и доп. - М.: 2011.

М.И., Витрянский В.В. Договорное право. Книга первая: Общие положения. М., 2007.

Гражданское право. Учебник в 4-х томах. Под ред. А.П. Сергеева. М., 2010.

Гражданское право. Учебник. Под ред. Е.А. Суханова. М., 2010.